Արձանագրության 4

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29.10.2018թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան/գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Ս. Կոտոլիկյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման** պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Ս. Կոտոլիկյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան